Արձանագրություն N 2

«ԴԱՊ-ԳՀԱՊՁԲ-20/05» ծածկագրով գնանշման հարցման ձևով գնում կատարելու ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Դիլիջան, Թբիլիսյանխճ. 2 — 13 հուլիսի 2020թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Լ.Աղամալյան
Հանձնաժողովի անդամներ՝ Հ.Վարդանյան և Մ.Զաքարյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Դիլանյան

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

(Լ.Աղամալյան)

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը

1.1. 2020 թվականի հուլիսի 10-ին էլեկտրոնային փոստով ստացված «ԴԱՊ-ԳՀԱՊՁԲ-20/05» ծածկագրով գնանշման հարցման հրավերի պարզաբանման վերաբերյալ քննարկում:

1.2. Ստացված հրավերի պարզաբանման բովանդակությունը հետևյալն է.
«ԴԱՊ-ԳՀԱՊՁԲ-20/05 ծածկագրով մրցույթի 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժիններով նախատեսվող յուղերի տեխնիկական բնութագրում նշված են կոնկրետ յուղի ցուցանիշներ, խնդրում ենք նշել միջակայքեր (Օրինակ՝ ոչ ավել, ոչ պակաս,...) կամ շեղման սահմաններ:»

2. Հանձնաժողովը որոշեց

(Լ.Աղամալյան)

2.1. Վերը նշված հարցման հրավերի պարզաբանման վերաբերյալ քննարկման ընթացքում, հանձնաժողովը որոշեց ընթացակարգը լուծարել, քանի որ պարզաբանման հարցման ստացման օրվանից հետո հնարավոր չէ ապահովել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված՝ հինգ օրացուցային օրվա ընթացքում հրավերում փոփոխության կատարելու համապատասխան գործընթացը, ինչը պայմանավորված է հանգստյան օրերի համընկնմամբ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

3. Հանձնաժողովի անդամների անուններն ու ազգանունները:

Հանձնաժողովի նախագահ՝ Լ.Աղամալյան

Հանձնաժողովի անդամներ՝ Հ.Վարդանյան

Մ.Զաքարյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Դիլանյան